ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ք. Երևան **13.07.2018թ., ժամը 9:45**

Տեղի ունեցավ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) արտահերթ նիստը:

Մասնակցում էին.

Կառավարման խորհրդի անդամներ

Հ. Այվազյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (Նիստը նախագահող)
Ա. Հովհաննիսյան	ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ
Ա. Բաբայան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
Բ. Պիպոյան	«Իրազեկ և պաշտպանված սպառող» հասարակական կազմակերպության ղեկավար (համաձայնությամբ)
Հ. Ավագյան	ՓՄՁ համագործակցության ասոցիացիայի տնօրեն (համաձայնությամբ)
Ա. Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ա. Առաքելյան	ՀՀ ԳԱԱ-ի մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող, կենսաբանական գիտությունների թեկնածու

Բացակայում էին.

Ա. Խաչատրյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար (Խորհրդի նախագահ)
Դ. Պիպոյան	ՀՀ ԳԱԱ-ի էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի ղեկավար, սննդագիտության դոկտոր (համաձայնությամբ)

Մասնակիցներ՝

Գ. Ավետիսյան	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար
Ա. Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ

Օրակարգ. Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալների թեկնածությանը հավանություն տալը՝ ՀՀ վարչապետի հաստատմանը ներկայացնելու նպատակով:

Խորհրդի նիստը բացեց Խորհրդի անդամ, ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար Հ. Այվազյանը, ով նախագահեց Խորհրդի նիստը Խորհրդի նախագահ, ՀՀ գյուղատնտեսության նախարար Ա. Խաչատրյանի լիազորությամբ (գրությունը կցվում է): Նշվեց, որ քվորումն ապահովված է, որից հետո Խորհրդի անդամները միաձայն հաստատեցին ներկայացված նիստի օրակարգը: Հ. Այվազյանը նշեց, որ Խորհրդի քննարկմանը ՍԱՏՄ ղեկավարի կողմից ներկայացված է ՍԱՏՄ ղեկավարի տեղակալների երկու թեկնածուներ՝ Էդգար Ճաղարյանը և Ալեքսանդր Ավետիսյանը: Նախագահողի առաջարկությամբ որոշվեց լսել թեկնածուներին, որոնք իրենց ինքնակենսագրական տվյալներից զատ ներկայացրեցին նաև իրենց պատկերացումները ոլորտում առկա խնդիրների և դրանց հնարավոր լուծումների մասին:

Գ.Ավետիսյանը նշեց, որ պատրաստվում է ոլորտի համակարգման պատասխանատվությունը բաժանել տեղակալների միջև, կախված նրանից, թե ինչպես թեկնածուները կպատասխանեն հարցերին: Երեք տեղակալներից մեկի հաստիքը ՍԱՊԾ պետի տեղակալ է, ինչը ժամանակի ընթացքում կփոխվի, այժմ առաջարկում է քննարկել երկու տեղեկալների թեկնածությունը: Նշեց, որ երկուսն էլ նեղ մասնագետներ չեն, Է. Ճաղարյանը ավելի մոտ է ոլորտին, պարենային անվտանգության մասնագետ է, ում, բացի աշխատակազմի ոլորտների համակարգումից, պատրաստվում է ուղղորդել դեպի տեսչական հատված, որպես ստուգումների մասի համակարգող, իսկ Ա. Ավետիսյանի մասով դեռ չի պատկերացնում, քանի որ վերջինս մասնագիտությամբ ժուռնալիստ է, շատ տեղերում աշխատել է որպես կառավարիչ, ունի կառավարման փորձ, բայց դեռևս չի պատկերացնում, թե որ ոլորտները կարող է համակարգել:

Բ.Պիպոյանն առաջարկեց համակարգման ոլորտների մասին հարցը թողնել վերջում, քանի որ քվեարկություն կատարելու են թեկնածուներին լսելուց հետո, դրանից պարզ կլինի, պետը ինչ դիրքորոշում կունենա: Նա առաջարկեց անկեղծ լինել, որ հնարավոր մի քանի հարց տալուց շփոթվեն, պետը ոչ մեկին ոչ մի տեղ չցանկանա տեսնել:

Հ.Այվազյանը նշեց, որ նման հարցով Խորհուրդը մեկ անգամ էլ է քննարկում ունեցել, բայց պետը ներկայացվել էր Խորհրդի կողմից, տեղակալը ներկայացվում է մարմնի ղեկավարի կողմից, նաև ղեկավարը պիտի ներկայացնի, թե ինչի համար է ներկայացրել

տվյալ թեկնածուներին, եթե պետը ներկայացրել է, ինքը խնդիր չի տեսնում: Ներս հրավիրելով թեկնածու Է. Ճաղարյանին, խնդրեց ներկայացնել իրեն:

Էդգար Ճաղարյանը ներկայացրեց իր կենսագրական տվյալները՝ նշելով, որ ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը և <<ՀՀ պարենային անվտանգության արդի հիմնախնդիրները>> ատենախոսության թեմայի պաշտպանությամբ ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: ՀՀ ՊՆ-ում պարտադիր զինվորական ծառայությունից հետո աշխատել է ՀՀ ՊՆ վարչական ապարատում՝ որպես տեղեկատվավերլուծական բաժնի, այնուհետև՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտում՝ որպես պարենային ապահովման բաժնի պետ: Աշխատել է ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայությունում՝ որպես առաջին բաժնի առաջատար մասնագետ, մասնակցել ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ում իրականացվող ուսումնասիրություններին:

Հարցեր ուղղեցին

Հ. Այվազյանը, Բ. Պիպոյանը, Ա. Առաքելյանը,Գ. Ավետիսյանը, Ա. Ասոյանը:

Հ. Այվազյանը նշեց, որ կենսագրական տվյալները Խորհրդին տրամադրվել էին, ուստի առաջարկեց խոսել առաջադրված պաշտոնի լիազորությունների, մոտիվացիայի ոչ ավել, ոչ պակաս կարևոր հարցի մասին:

Է.Ճաղարյանը պատասխանեց, որ գրեթե 10 տարի ոլորտի մեջ է, զբաղվում է պարենային հարցերով, չլինելով ՍԱՊԾ աշխատակից, ծանոթ է, նույնիսկ ուսումնասիրություններ է իրականացրել 2017թ ծառայությունում, խնդիրներին նույնպես ծանոթ է, պատրաստվում է պաշտոնը ստանձնելուց հետո խիստ տեմպերով իր գործունեությամբ խնդիրների լուծումները գտնել:

Հ. Այվազյանը խնդրեց տեղեկացնել 2017թ. ստուգումների արդյունքների մասին, քանի որ Խորհուրդը նոր կարգավիճակով մարմնի հետ կապված է:

Է. Ճաղարյանը պատասխանեց, որ արդյունքների մասին զեկուցվել է Հանրապետության նախագահին: Չարաշահումները ինչպես անփութության, այնպես էլ իր կարծիքով միտումնավոր են եղել, հիմնականում սահմանային հսկողության ոլորտում են արձանագրվել բացթողումներ, որոնք խիստ ակնհայտ են եղել, հույս հայտնեց, որ դրանից հետո որոշակիորեն շտկվել են: Հավելեց, որ խախտումներ են եղել նաև լաբորատոր փորձաքննությունների նկատմամբ անաչառության մեջ:

Քանի որ ոլորտը ստուգել է, ծանոթ է, սկսած վարչատնտեսականից, վերջացրած նեղ ոլորտային երեք ուղղություններով, կա առանձին չորրորդ ուղղություն, որը առանձնացված է (հասարակայնության հետ աշխատանքն է, արտաքին կապերի աշխատանքը), Բ. Պիպոյանը հարց ուղղեց թեկնածուին, թե որ ուղղության մեջ է ավելի շատ իրեն տեսնում, նաև ավելացրեց մեկ հարց, որ ավելի շատ կապված է նախկին աշխատանքով, երբ եկել էին ստուգման ժամանակին, եղել է իրենց թիմում մի մարդ, ով կարող էր հասկանալ, որ դիտարկում գործիքը, որ բացվել էք, <<Երևան Սիթիում>> գտել էին ապրանք, հայտարարություն էին տվել, դրանով չէր ավարտվել անելիքը, գործողությունը, եղել է արդյոք

իրենց թիմում մասնագետ, որ մտներ և հասկանար, որ դիտարկումը տեսնել և տեղեկանք գրելով չի ավարտվում:

Թեկնածուն նշեց, որ իրենք եկել էին հատուկ ուղղվածության կոնկրետ բարձրացված հարց ուսումնասիրելու, մասնագետներ չեն ներգրավել համապատասխան ոլորտից:

Բ.Պիպոյանը նկատեց, որ մասնավոր լաբորատորիայի դիմում-բողոքի հիման վրա էր այդ ստուգումը, բաց նամակ էր նախագահի անունով հրապարակված, և հենց սահմանում փողերի բաշխման խնդիր էր, բայց իրականում, որ եթե մնացածը ստուգեին, այդտեղ էլ խնդիրներ կլինեին:

Է. Ճաղարյանը նշեց, որ իրենք առաջարկել են նաև կատարել ստուգում, որովհետև իրենք իրականացրել էին միայն դիտարկում, առաջարկել են դիմել ՍԱՊԾ, ՎՊ ուսումնասիրություն իրականացնելուց առաջ:

Ա. Առաքելյանը նշեց, որ թեկնածուն ծանոթ է ոլորտի խնդրներին, իրեն տեսնում է սննդամթերքի անվտանգության ոլորտում, կարող է ներկայացնել լուծման կարիք ունեցող որևէ խնդիր:

Է. Ճաղարյանը պատասխանեց, որ իր կարծիքով ստուգումները, դիտարկումները և ուսումնասիրությունները պիտի կամայական և ըստ ճաշակի չլինեն, պետք է տնտեսվարողը շատ հարգանքով մոտենա այս կառույցին, պետք է չլինի վախի մթնոլորտ, համագործակցելով պիտի արտադրի և իրացնի անվտանգ սնունդ, պետք է մոռանա այն ուղղությունը, որ ՍԱՏՄ-ում հնարավոր է առանց դիտարկման որևիցե ուսումնասիրության արձանագրություն կազմել, տալ տեղեկանքներ, ապրանքը չզննելով՝ զննման մասին արձանագրություն կազմել, չուսումնասիրելով հետազոտությունների արդյունքների մասին արձանագրություն կազմել: Իրեն ոչ միայն սննդամթերքի անվտանգության ոլորտում է պատկերացնում, այլև շատ խնդիրների լուծումները գրեթե պատրաստ կներկայացնի առաջարկությունների տեսքով մոտ ժամանակահատվածում, նաև կապված հիվանդ խոշոր եղջերավոր կենդանիները առողջներով փոխարինելու գործընթացի հետ, որը պետությանը մեծ ֆինանսական ծախսերի մեջ չի գցի (նունիսկ առանց ֆինանսական ծախսերի):

Բ.Պիպոյանը թեկնածուի՝ սննդամթերքի անվտանգության վերահսկողության նկատմամբ մոտեցումը առաջարկեց բաժանել 2 հավասար մասերի: Երկրոդ մասում, որը տեխնիկական էր, որտեղ ավելի շուտ անելիք չկա կամ քիչ կա, մոտեցումն է՝ <<չի կարելի և վերջ, չես տեսել ապրանքը, չպետք է արձանագրել>>, մոտեցումը կարող է լինել ոչ մասնագիտական, բայց առաջին հատվածը ավելի խորն է, որովհետև, կամայականություններ ստուգումներում չլինելը իրականում սննդի անվտանգության տեսչական ոլորտի առանձին բլոկի՝ ռիսկերի կառավարման հարց է, իսկ ռիսկերի կառավարումը գիտական է: Կամայականությունները բացառելով, թեկնածուն ռիսկերի կազմման պրոցեսը լավ պատկերացնում է, հասկանում է, որ այդ ցիկլը շատ ավելի խորը մասնագիտական է: Թեկնածուն ավելի շատ ռիսկերի կառավարման բաժնի գործառույթների վերահսկումը, թե արդեն ցանկը պատրաստ լինելուց հետո ստուգման պրոցեսն է պատկերացնում, թե երկուսն էլ միարժամանակ: Նշեց որ պլանավորումը մասնագիտական գործառույթ է, համակարգը այդտեղ ուրիշ ձևով է աշխատում, կամայական չէ, թե որ ապրանքն է ստուգվում, որը՝ ոչ:

Ա. Առաքելյանը նկատեց, որ թեկնածուի ինքնակենսագրականից պարզ է, որ այս ոլորտ եկել է տնտեսագիտության ոլորտից, ասում է, որ պետք է կանխվեն կեղծ արձանագրությունները, բայց արդյոք իր փորձը կբավարարի գնահատել զննման արդյունքները, հասկանալ, արդյոք զննումը կատարվել է ճիշտ թե սխալ, կամ չի կատարվել ընդհանրապես, խոսքը մասնագիտական տեսանկյունից է:

Է. Ճաղարյանի կարծիքով, իրեն առաջադրված պաշտոնում պարտադիր չէ, ինքը մասնակցի զննման գործողությանը, դրա կազմակերպումն է կարևոր:

Ա. Ասոյանը հարց ուղղեց, թե թեկնածուն եթե տեղյակ է, որ ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգ է ներդրվել մարմիններում, ինչպես է վերաբերվում այդ համակարգով աշխատանքին և ինչ է կարծում, ռիսկայնությունը հաշվարկելուց և տեսչական մարմնի կողմից գնահատվելուց հետո պետք է արդյոք գնալ ստուգումների, կամայականությունների կանխարգելումը ինչպես է պատկերացնում:

Է. Ճաղարյանը նշեց, որ դեռ ծանոթ չէ այդ համակարգին, շատ ոլորտներ կան, ՍԱՊԾ ստուգելու ժամանակ պարզ է դարձել, որ շատ լավ համակարգեր, ծրագրեր կան մշակված, բայց դրանցից գրեթե ոչ մեկը լավ ձևով չեն իրականացվել այսինքն՝ դրսից ավելի վատ կարծիք կա, թե մարմինը դրա հնարավորությունը չունի:Նա ավելացրեց, որ եթե կան արագ արձագանքման հարցեր, պետք է արագ կազմակերպել դրանք:

Հ. Այվազյանը առաջարկեց քննարկել երկրորդ թեկնածուին լսելուց հետո: Նա նշեց,որ եթե կա գործողություն, որը կարող է հանգեցնել տրամաբանական ավարտին չհասնելուն, կա բողոքարկման հանձնաժողով: Նա առաջարկեց ներս հրավիրել Ա. Ավետիսյանին, խնդրեց ներկայացնել ինքնակենսագրականից զատ տվյալներ:

Ա. Ավետիսյանը ներկայացրեց իր կենսագրական տվյալները՝ նշելով, որ ավարտել է <<Գլաձոր>> կառավարման համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետը, Եվրոպայի Խորհրդին կից քաղաքական դասընթացների երևանյան դպրոցը և քաղաքացիական հետազոտությունների Մոսկվայի դպրոցը: Աշխատանքային գործունեությունը սկսել է որպես լրագրող, աշխատել <<Բանբեր>> և <<Լրագիր>> օրաթերթերում, <<Հայլուրում>>, եղել է <<Գրանդ Տոբակո>> հայ-կանադական ՀՁ գովազդի և հասարակայնության հետ կապերի բաժնի պետը, <<ՌԷՄ գովազդային գործակալություն>> և <<Նախընտրական տեխնոլոգիաների կենտրոն>>, <<ՌԷՄ-Ագրո Թրեյդինգ>> ՍՊԸ-ների տնօրենը, <<Լարի>> պանիր արտադրող իրավաբանական անձանց միավորման տնօրենի խորհրդականը:

Հարցեր ուղղեցին

Հ. Այվազյանը, Ա. Առաքելյանը, Ա. Պողոսյանը, Ա. Հովհաննիսյանը, Հ. Ավագյանը, Բ. Պիպոյանը, Գ. Ավետիսյանը, Ա. Ասոյանը:

Ա. Ավետիսյանը նշեց, որ ինքը առանձնապես ոլորտի մասնագետ չէ, լրագրող է, 2007թ-ից շատ պատահաբար զբաղվել է այն բիզնեսով, որն առնչվել է ոլորտին՝ աճի խթանիչների, պեստիցիդների և ժամանակակից նոր տեխնոլոգիաների ներմուծմամբ, որոնք կապված են ինտենսիվ գյուղատնտեսության հետ, համագործակցել է ճապոնական մի շարք ընկերությունների հետ, Հայաստանում գրանցված բույսերի պաշտպանության մոտ հարյուր միջոցների գրանցումը կատարվել է իր մասնակցությամբ, դրանց մեջ շատ քիչ են չինական պրեպարատները, հիմնականում որակյալ խթանիչներ են, որոնք նաև օգտագործվում են

ԵՄ անդամ երկրներում: 2017թ-ից սկսել է զբաղվել ակտիվ քաղաքականությամբ, թողել է բիզնեսը, բայց բավականին լավ պատկերացնում է ոլորտում առկա խնդիրները, մասնավորապես՝ ֆիտոսանիտարիայի բնագավառում դրանք շատ են, հաճախ պետական մարմինների համար տեսանելի չեն, նաև կան, որ ազգային անվտանգության աստիճանի կարևորության հարցեր են:

Հ. Այվազյանը խնդրեց որևէ օրինակ բերել:

Թեկնածուն պատասխանեց, որ գաղտնիք չէ, որ Հայաստանը օնկոլոգիական հիվանդությունների գծով այսօր աշխարհում առաջատար երկրներից է, արդյոք կան հետազոտություններ, թե շուկայում առկա մեծ քանակով անորակ պեստիցիդների առկայությունը ինչքանով է նպաստում այդ գործընթացին, ինքը կարծում է, այդտեղ անմիջական կապ կա, հետխորհրդային տարածքում երևի միակ երկիրն է Հայաստանը, որտեղ պեստիցիդների շուկայում չինական անորակ ապրանքները առյուծի բաժին են կազմում:Նույնիսկ միջինասիական երկրների մեծ մասում իրավիճակը ավելի լավ է: Չինական վատ որակի պեստիցիդները շուկայում 70-80% են կազմում: Ինքը դա համարում է ազգային անվտանգության խնդիր:

Հ. Այվազյանը հարցադրում արեց, թե կա արդյոք ուսումնասիրություն, որ դրանից օնկոլոգիական հիվանդությունները ավելանում են:

Բ.Պիպոյանը նկատեց, որ պեստիցիդների մնացորդները տեսականորեն վտանգավոր են, բայց այս հարցում պետք է դիտարկել նաև հանքարդյունաբերությունը, որպես նպաստող գործոն, կոնկրետ հետազոտություններ չի տեսել:

Ա. Ավետիսյանն ավելացրեց, որ ինքը չի տիրապետում որևէ ուսումնասիրության, բայց կարդում է, գիտի, որ պեստիցիդների գրանցման և շուկայում վերահսկողության մեխանիզմները պետք է վերանայել, պետությունը իր մասնակցությունը պիտի ունենա, ներքևի օղակներից սկսած պետք է հասկանալ, թե ինչ է կատարվում, Հայաստանը այն երկրներից է, որտեղ մանրածախ վաճառքի կետերում թույլատրվում է շշալցում կատարել, այսինքն տեղում գյուղացին գալիս է, հաճախ խաբված դուրս է գալիս, շշի մեջ արտասահմանյան որակյալ պեստիցիդների փոխարեն գնում է չինական վատ որակի ապրանք, որը անդրադառնում է թե բերքի որակի վրա, թե ազդում է սպառողի առողջության վրա: Իր խնդիրը հիմնականում պատկերացնում է, կարծում է ավելի շատ ֆիտոսանիտարիայի բնագավառի մեջ իր փորձը պրակտիկ կիրառում կստանա:

Հ. Այվազյանը ճշտեց, թե վերջին երեք կազմակերպություններում, որտեղ տնօրեն է եղել, նաև սեփականատեր է արդյոք:

Թեկնածուն պատասխանեց, որ վերջինում ոչ, իսկ նախավերջինում եղել է բաժնետեր:

Բ. Պիպոյանը հարց ուղղեց, որ եթե մասնագիտական ոլորտին չի տիրապետում, տեղյակ է արդյոք, որ միայն թունաքիմիկատները չեն, ավելին, այս երկիը ֆիտոսանիտարիայի ձեռքը կրակն է ընկած և արտահանման ժամանակ պտուղ բանջարեղենի մեջ ֆիլոքսերիան շատ է: Հարցը այն ոլորտում է, որը պետք է համակարգի, այդ ոլորտի բիզնեսում երկար տարիներ աշխատել է, ինչպես է շուկային դիմացել, եթե լավ պեստիցիդ է բերել և դրանց կողքին եղել են վատ պեստիցիդներ: Ակտիվ քաղաքականության մեջ գտնվելով, մասնագիտությամբ լրագրող լինելով, իմանալով, որ համակարգում կա լուրջ պրոբլեմ, այս պրոբլեմը երկու-երեք

տարի ինչու է պահել, ինչու լիազոր մարմնին տեղյակ չի պահել կամ դիմում-բողոք չի գրել, մամուլի որևէ հրապարակում չի արել:

Թեկնածուն պատասխանեց, որ ինքը որևէ լծակ կամ հնարավորություն չի ունեցել բարձրաձայնելով լուծել խնդիրը, քանի որ շուկայում հիմնական գործող անձը եղել է մի ընկերությունը, որը օլիգարխի է պատկանել, որին դա թույլատրված է եղել:

Հ. Այվազյանի հարցին ի պատասխան, թեկնածուն նշեց, որ այդ ընկերությունը եղել է <<Նատալի Ագրոն>>, և միջև հեղափոխությունը այս երկրում խաղի կանոնները ուրիշ են եղել, եթե ինքը բարձրաձայներ, շատ արագ շուկայից դուրս կթռներ:

Ա.Առաքելյանը հարց ուղղեց, թե խոսելով կապի մասին և հետաքրքրվելով ուսումնասիրություններից, պատրաստվում է արդյոք համագործակցել ակադեմիական հիմնարկների հետ, առողջապահության նախարարության և գիտական կազմակերպությունների հետ՝ այդ հարցի գիտական հիմնավորումը տալու համար:

Թեկնածուն պատասխանեց, որ առայժմ չի կարող հստակ ասել, բայց կարծում է, ՍԱՏՄ-ն անխոս պետք է համագործակցի պատկան կառույցների հետ, բայց առողջապահության նախարարության հետ կապված խնդիրներ կան, որ պետք է քննարկվեն, մասնավորապես, մանրածախ վաճառքի հարցը, որ կարգավորվում է նաև առողջապահության նախարարության նորմատիվ իրավական ակտերով, որոնք թղթի վրա գրված են ու չեն գործում, կամ պետք է ապահովել դրանք կիրառումը, կամ անհնարինության դեպքում փոփոխել դրանք: Որպես օրինակ, առաջարկեց մանրածախ վաճառքի կետերը բնակչությունից սահմանված հեռավորություն վրա պահել:

Հ. Այվազյանը և Բ. Պիպոյանը փաստեցին, որ այդ հարցը արդեն լուծված է, օրենքում փոփոխություն է կատարվել կես տարի առաջ: Բայց խնդիրները շատ-շատ են:

Ա. Ասոյանը, հաշվի առնելով թեկնածուի մասնագիտությունը, հույս հայտնեց, որ տեղյակ է, տեսչական մարմնի առաջնահերթություններից է տնտեսվարողների հետ տարվող աշխատանքը, ոլորտում ինչպես է պատկերացնում համագործակցությունը, քանի որ <<Տեսչական մարմինների մասին>> ՀՀ օրենքով է ամրագրված, որ ստուգումը գործիքներից մեկն է, բայց ոչ միակը: Ստուգման կարելի է գնալ ծայրահեղ դեպքերում, բայց հիմնական շեշտը տնտեսվարողների հետ աշխատանքն է, ինչպես է դա պատկերացնում և արդյոք գործող ընթացակարգով է պատրաստ համագործակցել:

Թեկնածուն պատասխանեց, որ իր կարծիքով ստուգումները պետք է լինեն առաջին պլանում, թեև ավելի շատ գործընկերային հարաբերությունների կողմնակից է, նախընտրում է բաց, թափանցիկ աշխատանք, կարծում է հստակ պետք է գիտակցել այն խնդիրները, որ կան, փորձել համատեղ ջանքերով լուծում տալ (համագործակցության կողմնակից է), թեև ծանոթ չէ գործող ընթացակարգերին, աշխատանքի անցնելուց հետո առաջին մեկ-երկու շաբաթվա ընթացքում հնարավոր կլինի ծանոթանալ դրանց, քանի որ ինքը ոլորտի մասնագետ չէ:

Բ. Պիպոյանի հարցին, թե իմանալով, որ ֆիտոսանիտարիայի բնագավառը շատ լայն է, սննդի պեստիցիդների մնացորդների մոնիթորինգը պետք է իրականացնի սննդի տեսչությունը, ֆիտոսանիտարիան դրա հետ կապ չունի, անգամ այս վատ օրենսդրության

պայմաններում, ֆիտոսանիտարիայի տեսչության (որը ժամանակին եղել է շատ ուժեղ տեսչություն) պետի տեղեկալի հաստիքում թեկնածուն իրեն տեսնում է, թե ոչ:

Թեկնածուն պատասխանեց, որ ստեղծված հետհեղափոխական իրավիճակում՝ այո, երկիրը բնականոն զարգացման հունի մեջ դնելուց հետո՝ ոչ: Հույս հայտնեց, որ մոտ ապագայում միայն լավ մասնագետներ կլինեն ղեկավար պաշտոններում: Բայց այս պահին ինքը որոշակի անելիքներ ունեի, որովհետև ինֆորմացված է, փորձ ունի, որ կարող է կիրառել:

Ամփոփելով քննարկումը, Հ. Այվազյանը դիմեց ՍԱՏՄ ղեկավարին, շեշտելով,որ իր կարծիքով, գոնե իր համար, սկզբունքը հետևյալն է եղել, որ եթե մարդը ներկայացնում է իր տեղակալին, ինքը ոչ թե կողմ պետք է լինեի, այլ դեմ չլինի: Բայց որպեսզի դեմ չլինի, իր համար կարևոր է՝ այն մարդը, ով ներկայացվում է, ներկայացվի ղեկավարի կողմից, ղեկավարը նշի, թե իրեն ինչի համար են պետք, թե ինչպես պետք է նրանց <<օգտագործի>>: Այստեղ (լավ է ասված՝ հետհեղափոխական ժամանակաշրջանում) սննդամթերքի անվտանգության ոլորտի փորձ է պետք, որը ավելի շատ է. Ճաղարյանի մոտ է նկատվում, բայց Ա. Ավետիսյանի մոտ ակնհայտ է, որ չկա, չի կարծում այս կարճ ժամանակահատվածում հասցրած լիներ վարչարարությունը սերտել: Նշեց, թե ինչից ելնելով է այս հարցը տալիս. տեսչական մարմնում (ամբողջ քաղաքականությունը տարել են նրան, որ լինի հետևյալը) տեղակալների միջև բաժանված լինեն առնվազն վերլուծական և վարչարարական բլոկները: Եթե օրինակ մի տեղակալը ամենասուպեր դեմքն է, ինքը կամ պետք է դրանով զբաղվի, աշխատանքի բաժանումը ղեկավարը պետք է պատկերացնի և, հաշվի առնելով ՍԱՏՄ դեռևս անհայտ իրավակարգավորումների դաշտը (խնդրեց ավելի ուշ կարճ քննարկել, հասկանալ ինչպես են առաջ գնում), ցանկացավ այդ հարցի պատասխանը լսել:

Գ. Ավետիսյանի կարծիքով, բարդ հարց է ուղղված՝ հստակ պատասխանելու համար, վարչարարության մասով, կարծում է, ինչ վերաբերվում է Է. Ճաղարյանին, ՊՆ-ում աշխատած ժամանակահատվածը կօգնի, այս ընթացքում չնայած չի նշանակվել, հասցրել է շփվել թեկնածուի հետ և աշխատանքում տեսնել, քանի որ <<պարենային>> բառը կա մասնագիտության և աշխատանքի մեջ, գիտի ինչ է ստուգումները, այդ մասով օգտակար կլինի:

Ավետիսյանի վերաբերյալ հարցը բարդ է, չի շփվել և չի աշխատել, բայց կարծում է ֆիտոսանիտարական ոլորտի կարգավորման համար պետք կգա, բայց այս դեպքում ֆիտոսանիտարիայի տեսչության պետի կարգավիճակում (մինչև մարմնում կառուցվածքային փոփոխությունը ֆիտոսանիտարիայի բլոկը գործում է տեսչության կարգավիճակով):

Հ. Այվազյանը խնդրեց հստակեցնել, թե ինչ նկատառում ունի ղեկավարը, արդյոք առաջարկում է թեկնածուին նշանակել որպես տեղեկալ, հետո վերանայելու պայմանով, թե ոչ:

Գ. Ավետիսյանը պարզաբանեց, որ լսելով թեկնածուին, հասկացել է, որ կարող է ձգտել ֆիտոսանիտարիայի տեսչության (հետագայում վարչություն) պետի (կամ տեղակալի) պաշտոնին, որովհետև ինքը թեկնածուին չի տեսնում այլ որոտում, իր համակարգման տակ դնելու այլ ոլորտ դեռ չի պատկերացնում:

Հ.Այվազյանը փաստեց, որ ինքը դեմ չէ, բայց ուզում է ֆիքսել, որ սա ղեկավարի պատասխանատվությունն է, ինքն է իրենց ներկայացնում, ինքն է ոտքով-ձեռքով պատասխանատու իրենց գործունեության համար, և բնականաբար, կարևոր չէ, մեկն առաջարկել է թե ոչ, ինքն է նրանց թեկնածությունը ներկայացնում թե Խորհրդին և թե վարչապետի նշանակման: Սա ամբողջությամբ իր պատասխանատվությունն է, և օրենքի ամբողջ տրամաբանությունն էլ հենց այն է, որ ղեկավան է տեր լինելու իրենց աշխատանքին: Հ. Այվազյանը շեշտեց, որ Խորհրդի անդամների գործառույթը կողմ կամ դեմ լինելն է թեկնածությունը վարչապետի նշանակմանը ներկայացնելուն:

Բ. Պիպոյանը նշեց, որ մեկ տեղակալ ոչ մասնագետ վարչարարության գծով նշանակելը որևէ կերպ կարող է հասկանալ, բայց Խորհրդի առաջին նիստում իր առաջին հարցը, որ ուղղել է ղեկավարին, այն է եղել, թե ինչ է անելու ոչ մասնագետների հետ: Գ. Ավետիսյանը պատասխանել է, փոխելու է պաշտոնի անձնագրերը: Բ. Պիպոյանը տեղեկացրեց, որ հինգ տարի ՀԿ դաշտում իր գործունեության ժամանակ, անհրաժեշտության դեպքում, որպես փորձագետ աշխատելու համար մասնագետ կադրեր չի կարողանում գտնել, մարդիկ, ովքեր իսկապես մասնագիտությունը տիրապետում են, բարձր աշխատավարձ են պահանջում, ավելին, ՀԿ գալու համար իմանալով, որ լավ գործ է, թողնում են իրենց բարձր աշխատավարձով աշխատանքը, գալիս են: Այս բարձր պաշտոնում ոչ մասնագետի նշանակմամբ, ամենակարևոր մասնագիտական պաշտոնները ոչ մասնագետներին վստահելով, ինչպես է մոտիվացնելու այն ոլորտային մասնագետին, ով պետք է աշխատի ոչ մասնագետ ղեկավարի ենթակայությամբ: Այս մոտեցումը շարունակելու դեպքում ինքը խորին համոզմունք ունի, որ այս հիմնարկի միակ պրոբլեմը պետը չի եղել, որ տրվել են վատ տեղեկանքներ, որովհետև հիմնարկում եղել են անգործության մատնված, գործին չտիրապետող աշխատակիցներ: Առաջարկեց ուսումնասիրել ՍԱՊԾ հաստիքացուցակի ղեկավար պաշտոնները և համոզվել, որ դրանք զբաղեցնող անձինք հիմնականում պահանջվող մասնագիտության հետ կապ չունեն: Տեղակալների պաշտոններում ոչ մասնագետ նշանակելը ղեկավարին հնարավորություն չի տալու հիմնարկը համալրել մասնագետ կադրերով:

Հ.Ավագյանը նշեց, որ ՍԱՏՄ ղեկավարի ընտրության հարցով Խորհրդի նիստի ժամանակ նույնպես առնչվել են նման խնդրին, ավելի ուշ իրենց դիմած անձի թեկնածությունը Խորհրդում չի քննարկվել և իր կարծիքով, անհրաժեշտ է, որ ՍԱՏՄ ղեկավարը տեղակալներին ներկայացնելիս ընտրության հնարավորություն տա գործատուին և որպես թեկնածու ներգրավի նաև մարմնում աշխատող մասնագետ կադրերին (օրինակ՝ Ա. Վարդանյանը, ով դիմել էր ղեկավարի պաշտոնում իր թեկնածությունը քննարկելու համար, բայց ընթացակարգային առումով ուշացել էր): Խորհրդի լիազորությունները հաշվի առնելով՝ նկատեց, որ իրենց գործառույթը այս հարցում աջակցելն է մարմնի ղեկավարին ճիշտ ընտրություն կատարելու հարցում, նաև նշեց, որ համաձայն է Հ. Այվազյանի դիտարկմանը, թե ղեկավարն է ներկայացնելու իր տեղեկալներին: Իր կարծիքով, օրինակ, Ա. Ավետիսյանի ՓՄՁ գործունեությանը ծանոթ լինելով, չի պատրաստվում գնահատականներ տալ: Պետք է ճիշտ որոշում կայացնել, չառաջնորդվել այն սկզբունքով, որ կարելի է ոչ մասնագետին նշանակել, իսկ վատ աշխատելու դեպքում՝ աշխատանքից ազատել:

Հ.Այվազյանի կարծիքով, եթե ղեկավարը ներկայացնում է թեկնածուներ, երաշխավորում է նրանց, նա մինչև վերջ պիտի պաշտպանի նրանց թեկնածությունը, նաև խնդրի վստահել իր թեկնածուներին: Թեկնածու ներկայացնելը ղեկավարի գործողությունն է, Խորհուրդը պետք է գնահատականներ տա, հետևի իր և իր տեղակալների գործողություններին և անհրաժեշտության դեպքում պատասխանատվության կանչի հենց ղեկավարին:

Խորհրդի անդամները համամիտ էին, որ տեղակալի պաշտոնում ցանկալի է նշանակել մասնագետ կադրերին, քանի որ առանց ոլորտը իմանալու հնարավոր չէ վերահսկել աշխատակիցներին, ներգրավել մասնագետներին:

Հ. Այվազյանը նկատեց, որ հաշվի առնելով օրենսդրությունը՝ տեսչական մարմնի ղեկավարի և տեղակալների պաշտոնները վարչական են, որից ենթադրվում է, որ իրենք փոխվելու են քաղաքական թիմի հետ, այսինքն, նեղ մասնագետների առկայությունը մի կողմից շատ վատ է, որովհետև կստացվի, որ նրանք միշտ փոխվելու են, իսկ տեղակալներից ներքև աշխատողները օրենքի ուժով պաշտպանված են, քաղաքացիական ծառայողներ են, հավելյալ երաշխիքներ ունեն, որ կամայականության արդյունքում չեն ազատվի աշխատանքից: Այս ամենը հաշվի առնելով, տեղակալը պետք է լինի վստահելի, որպեսզի ղեկավարի և ղեկավար քաղաքական թիմի տված ուղղությունները հասցնի ներքև և հետևի դրանց իրագործմանը: Չնսեմացնելով վարչության պետի աշխատանքը, նշեց, որ հակառակը, նրանք ավելի կարևորված են, հետևաբար, պաշտպանված են օրենքով (աշխատավարձի հարցը դեռ լուծված չի համարում), կարծում է, որ տեղակալը նեղ մասնագետ պետք է չլինի:

Բ. Պիպոյանի կարծիքով, երեք տեղակալներից մեկին, ով ոչ մասնագետ է, կարելի է վստահել միայն վարչարարության բլոկի համակարգումը, սակայն այս դեպքում, երբ հիմնարկի ղեկավարը խնդիր կունենա խոշոր ուղղությունների վերահսկման հարցում, կարծում է, որ մյուս 2 տեղակալները պետք է լինեն մասնագետներ: Այդ դեպքում քաղաքական թիմի փոփոխության ժամանակ ղեկավարի տեղակալների փոփոխությունը պարտադիր չի լինի:

Գ. Ավետիսյանը նշեց, որ ինքը համակարծիք է հնչեցված տեսակետին և երբեք ոչ մասնագետին չի ուղղորդի մասնագիտական բլոկ: Համաձայն է, որ քաղաքական թիմի կողմից վստահելի մարդիկ պետք է նշանակվեն, սակայն կիսում է մասնագետ չլինելու մասին Խորհրդի անդամների անհանգստությունը: Տեղակալների միջև բաշխումը պատրաստվում է կատարել աշխատելուց հետո:

Ա. Հովհաննիսյանը նշեց, որ Է. Ճաղարյանը վարչարությունը պահեց, Ա. Ավետիսյանը այս համակարգում <<ձեռնտու չէ>>, քանի որ ոլորտը չի հասկանում, բայց պետք է օբյեկտիվ լինել, Է. Ճաղարյանի թեկնածությունն առաջադրել, որպեսզի զբաղվի վարչարարությամբ, իսկ մասնագիտական հարցերը կարգավորել աշխատակիցների միջոցով, միչև համապատասխան մասնագետ տեղակալի նշանակումը, իսկ Ա. Ավետիսյանին առայժմ նշանակել ֆիտոսանիտարիայի տեսչության պետի տեղակալ:

Ա. Պողոսյանը խնդրեց տալ ընտրության հնարավորություն, որպեսզի վստահ լինեն, որ ճիշտ ընտրություն են արել, քանի որ պատասխանատու պաշտոններ են և ոլորտում խնդիրները շատ են, կարողանան լավ թեկնածու ընտրել:

Ա. Բաբայանի դիտարկմամբ սննդամթերքի ոլորտը բաժանված է երեք մասնագիտական ոլորտների, բացի դրանից կարևոր են նաև երկու ոլորտներ՝ սահմանային հսկողություն և ներքին հսկողություն, պետք է կիրառել նաև ներմուծման ոլորտի համակարգմամբ զբաղվող անձանց փորձը:

Ամփոփելով ասվածը, հիմնվելով Ա. Պողոսյանի և Ա. Հովհաննիսյանի դիտարկումների վրա, նաև հաշվի առնելով հարցի կարևորությունը և հրատապությունը, Հ. Ավագյանը առաջարկեց հավանություն տալ Է. Ճաղարյանի թեկնածությանը և մարմնի ղեկավարին խնդրել այս հարցում դիտարկել մեկից ավելի անձանց թեկնածությունը:

Հ. Այվազյանը առաջարկեց ՍԱՏՄ ղեկավարի և ղեկավարի տեղակալների հարցով կրկին Խորհրդի նիստ հրավիրել՝ սահմանված ժամկետում ՍԱՏՄ կողմից գործառույթների ամբողջ ծավալով իրականացմանը անցնելու պահին:

Նիստը նախագահողի առաջարկությամբ Խորհրդի անդամներն անցան քվեարկության:

Քվեարկություն՝

Էդգար Ճաղարյանի թեկնածությունը Վարչապետին ներկայացնելուն կողմ քվեարկեցին Խորհրդի նիստին մասնակցող անդամներից չորսը՝ Հ. Այվազյանը, Ա. Հովհաննիսյան, Ա. Բաբայան, Ա. Պողոսյան և դեմ քվեարկեցին երեք անդամներ՝ Բ. Պիպոյան, Ա. Առաքելյան, Հ. Ավագյան:

Ալեքսանդր Ավետիսյանի թեկնածությունը Վարչապետին ներկայացնելուն կողմ քվեարկեցին Խորհրդի նիստին մասնակցող անդամներից երկուսը՝ Հ. Այվազյանը, Ա. Բաբայանը և դեմ քվեարկեցին հինգ անդամներ՝ Ա. Հովհաննիսյան, Բ. Պիպոյան, Հ. Ավագյան, Ա. Պողոսյան, Ա. Առաքելյան:

Ամփոփելով քվեարկության արդյունքները՝ Խորհրուրդը որոշեց Վարչապետին ներկայացնել Էդգար Ճաղարյանի թեկնածությունը:

ՆԻՍՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ _____ Հ. ԱՅՎԱԶՅԱՆ